



ՎԱՍԵՄ. ԾԻՐԱՆԱԽՈՐ ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԱՂԱՃԱՆՆԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ ՀԱՒԱՏՈՅ ՏԱՐԱԾՄԱՆ Ս. ԺՈՂՈՎԻ

## ԾԻՐԱՆԵՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՍԿԵՂԷՆ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Յիսուսն տարուան լիառատ հունձքով ծանրարեան, առօր հասկերով աղաղձուն, ահա՛ խորան կը բարձրանայ Ծիրանեփառ Հայրապետը, իր քահանայութեան յիսներորդ տարեդարձին, զոհաբանական խունկ մատուցանելու:

Յաւիտենական քաղաքին մէջ, հակառակ Վսեմափայլ Յորեյեարին համեստ փափաքներուն, արտակարգ եռուզեռ մը կայ. ամէնազգի բարձրատիճան եկեղեցականներ, արեւելքի եւ արեւմուտքի պատկառելի ներկայացուցիչներ, զեսպաններ, ալլաճէս համայնքներու նուիրակներ, ամէն ազգէ ու զոյնէ, կը փութան տաճար, ջերմաղին իզձերով միանալու Հայ Ծիրանաւորին աղօթքին ու սուրբ Պատարագին:

Խորհուրդ խորին, անհա՛ս, անըսկի՛ղբն...:

Դպիրներու հոգեղմայլ երգերուն կը հիւսուի Վսեմ. Պատարագիչին ներդաշնակ մեղեդին, յուզումի շեշտերով ողբփառ. եւ խունկ, եւ իզձ, եւ հասկ, եւ կութք բերրի, աղօթքներով լիարուռ, ձմեռեան անմեղունակ ձիւնին մէջէն՝ կը ձօնուի բարեղութ Արարչին:

Խորհուրդ խորին, անհա՛ս, անըսկի՛ղբն...:

Կովկասի հզօր բնութեան ծնունդ, հայ ցեղի հարազատ ու պայծառ զաւակ, քրիստոնէական սուրբ կրօնքի արժանընտիր շառաւիղ, երբեմնի փոքրիկ Ղաղարոսը, մատաղ հասակէն ժառանգաւոր Աստուծոյ, ապա քահանայ, եպիսկոպոս, Պատրիարք եւ հոռակ Ծիրանաւոր, ահա՛ խորան կը բարձրանայ, նուիրելու համար

Ամենակալին՝ յիսնամեայ իր առաքելական յատուկին պատուներն յուռթի:

Խորհուրդ խորին, անհա՛ս, անըսկի՛ղբն...:

Աւետարանին նկարագրած փոքրիկ հատիկն էր Ղաղարոսը բարեպաշտ, որ Աստուծոյ երկիւղին ու շնորհքին պարարտ անդամատանին մէջ ունձացաւ, ոստեր արձակեց՝ հորիզոնէ հորիզոն, Կովկասէն Հռոմ, Պէյրութէն մինչեւ Հնդկաստան ու Փիլիպպեանները, մինչեւ Ուկրաինա ու Բարեյուսոյ Գլուխ, երկնային շնորհներով ցօղաթուրմ օժելու համար երկիրներ ու ազգեր, քաջ Հովիւին նման՝ աստուածային բալասանը տալու համար ծարաւի հողիներու:

Խորհուրդ խորին, անհա՛ս, անըսկի՛ղբն...:

Այս Յորեյեանը՝ այդ անհաս խորհուրդին երեւելի մէկ վկայութիւնն է եւ լուսապայծառ ցուրբ:

Վսեմափայլ Ծիրանաւոր Գրիգոր Պետրոս Աղաճանեան, Նախագահ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին, նախկին Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց, կը տօնէ իր քահանայութեան յիսնամեայ Յորեյեանը:

Հռոմ, 24 Դեկտեմբեր, 1967:

Սուրբ արարողութեան կը մասնակցի նաեւ, խումբ մը միաբաններով, Ուխտիա Ընդհ. Արբահայրը՝ Գրպձ. Հմայեակ Վարդ. Կէտիկեան, որ փութացած է անձամբ մատուցանելու Վսեմ. Յորեյեանին՝ Միաբանութեան ամենաջերմ մաղթանքն ու որդիական յարգանքը, այս նուիրական յիշատակին առիթով. մաղ-

թանք ու յարգանք, որ օծուն է երախտա-  
գլխակա վառ զգացումներով:

\* \* \*

Արդարեւ Միաբանութեանս վերջին ե-  
րեսնամեայ տարեգրութիւններուն մէջ՝  
Վսեմ. Ծիրանաւոր Աղաճանեանի անունը  
քանիցս արձանագրուած է քաղցր ողբի-  
չումով: «Բարձրագոյն» սիրով արձանագրու-  
ն է եղած բարձրագոյն շնորհարար այցելու-  
թիւններուն, որոնք անձառ միւթարու-  
թեամբ լեցուցած են Ս. Ղազարի միա-  
բաններուն սրտերը, եւ քաջալերանքի  
աղբիւր են եղած անոնց ժրջան աշխա-  
տանքներուն:

1936ի Հոկտ. 18ին կը բացուի ոսկեղէն  
չլթան. այդ օրը, Գրպծ. Ֆր. Աղաճանե-  
ան աստուածաշնորհ ձեռնադրութեամբ՝  
Միաբանութեանս կը պարզէէր վեց նոր-  
ընծայ կուսակից քահանաներ: Ինք եւս  
նորո՞ծ Եպիսկոպոս, երկնային շնորհնե-  
րու հանդիսավայր կը դարձնէր Ս. Ղա-  
զարը, մինչ երիտասարդ կորովի ոյժերով  
կամբանային շարքերը Միւթար Արքա-  
օր զինուորագրեալներուն:

Քիչ ժամանակ ետք՝ երիտասարդ ու  
շնորհալի Եպիսկոպոսը կը բարձրանար  
Պատրիարքական Աթոռի պատիւներուն,  
ու կը փոխադրուէր Պէյրութ: Աշխարհա-  
սասան պատերազմը կը զրկէր մեզ անոր  
տեսութենէն: Բայց ահա, թնդանօթնե-  
րու դադարումին, 1945ի Նոյեմբեր 24ին,  
դարձեալ կու գար Ս. Ղազար, այս ան-  
գամ Կաթողիկոսի հայրապետական քո-  
ղով շնորհազարդ, Միւթարի որդիներուն  
գոչելու «Խաղաղութիւն ընդ ձեզ»: Իր  
զաւակներու սիրով բարախուն բարեգութ  
Հայրիկի մը նման, կու գար ուրախալի-  
ցիլ՝ որ Միւթարի Տունը անասան էր  
մնացած, իր զանձերով պատկանելի:

Յաջորդ հանդիպումը Միւթարի որդի-  
ներուն հետ տեղի կ'ունենար Հոռմի մէջ,  
երբ մեր Գերեթ. Կաթողիկոսը կ'արժա-  
նանար Ծիրանի, եւ Սրբ. Քահանայա-  
պետին Սիքստեան մատրան մէջ կը մա-  
տուցանէր հանդիսաւոր ձայնաւոր պա-  
տարադ, որուն կը մասնակցէին Միւթ-

թարեան Հայրերը, Ս. Ղազարէն տանե-  
լով թանկարժէք զգեստներ ու շապիկներ,  
ոսկեճամուկ բանուածքներով ոլորուն,  
արծաթեղէն զարդերով զեղաքանդակ Ա-  
ւետարաններ եւ այլ սրբազան սպասներ  
(1946, Մարտ 12), առաւելագոյն վաղ  
տալու համար օրուան հանգէսին:

1950ին, Միւթար Արքաօր մահուան  
200ամեակի հանդէսներու աւարտին (8-  
10 Սեպտ.), շնորհալիայ մեր Կաթողի-  
կոս-Պատրիարքը, այս անգամ Ծիրանե-  
փառ Հայրապետ, կու գար Վենետիկ,  
հանդիսապէս նախագահելու յորեկանի  
փախումին, եւ իր հայրական խօսքն ու  
պատգամը բերելու՝ հեղինակաւոր ու  
պատմական ճառով մը:

1958ի Ապրիլ 24-28 օրերուն, Վսեմ.  
Ծիր. Աղաճանեան դարձեալ Վենետիկ  
կու գար ու կը նախագահէր Ս. Մարկոսի  
տաճարին մէջ, հանդիսաւոր պատարագի  
մը, հրաւէրով Վենետիկի Ամենապատիւ  
Պատրիարք Ծիր. Ռոնքալլի, եւ կը քա-  
ղցէր: Այդ օրերուն՝ Ծիր. Աղաճանեան  
հիւր էր Ս. Ղազարի. իր հայրական խօսքը  
կ'ուղղէր նաեւ Մուրատ - Ռափայէլեանի  
մէջ, Նահատակներու սուրբ յիշատակը ո-  
ղբելով. կը նախագահէր նաեւ իր Պա-  
տրիարքութեան 20ամեակին ի պատիւ  
սարքուած հանգէսի մը, Ս. Ղազարի մէջ,  
որու ընթացքին՝ Միաբանութեան Ընդհ.  
Արքաօրը Գրպծ. Սրապիոն Վրդ. Ու-  
լուհոնեան, զեղեցիկ ճառով մը կը վեր-  
լուծէր Ծիր. Աղաճանեանի Պատրիարքա-  
կան զործունէութիւնը՝ ազգանուէր ու  
եկեղեցաչէն: Երախտագլխակա տրի-  
տուն էր՝ զոր Միւթարեան Միաբանու-  
թիւնը կ'ընծայէր իր սիրելի Ծիրանաւոր  
Հայրապետին:

Քիչ օրեր ետք՝ կը լսէինք իր անուա-  
նումը Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի  
դեր-Նախագահութեան պաշտօնին. քանի  
մը տարի ետք՝ լիովին պիտի ստանձնէր  
զայն, Նախագահի տիտղոսով:

1959ի Նոյեմբեր 18ին, Ս. Աստուածա-  
մօր մասին ճառախօսութեան մը համար,  
հրաւիրուած էր Վենետիկ. իր շատ կար-  
ճաւեւ այցելութեան շրջանին, քանի մը

ժամ կը մնար մեր մօտ, հետաքրքրուելով  
նոյնիսկ իւրաքանչիւր միաբանի եւ ընծա-  
յացու աշակերտներու վիճակով:

1960ի Հոկտ. 30ին, Ս. Մարկոսի մայր  
տաճարին մէջ, արքեպիսկոպոս կը ձեռ-  
նադրէր Ուխտիս Ընդհ. Արքաօրը Գե-  
րապոյժառ Սրապիոն Վրդ. Ուլուհոնե-  
ան: Իսկ նոյն տարուան Դեկտեմբերի  
18ին, Փարիզի մէջ, Եպիսկոպոս կը ձեռ-  
նադրէր Ուխտիս միաբան՝ Գերպ. Կարա-  
պետ Վրդ. Ամատունի, որ կը դառնար Ա-  
ռաքելական Եքսարք Ֆրանսայի Հայոց:

Այսպէս, հոգեկան ամուր կապեր կը  
զօղէին Միւթարի որդիները իրենց սի-  
րելի Հայրապետին, հոգեւոր որդիու-  
թեան եւ շնորհի լուսաշող օծութեամբ:

1962ի Օգոստոսի 12ին, Վսեմ. Ծիր. Ա-  
ղաճանեան կը նախագահէր Ս. Ղազարի  
մէջ, Միւթար Արքաօր նորակերտ ար-  
ձանի բացման հանդէսին. իր շուրջն էին  
երկու նորընծայ միւսնաւորայր արեղա-  
ներ, զորս նոյն առաւօտն էր օծած: Այս  
առիթով՝ Վսեմ. Ծիրանաւորը Ս. Ղա-  
զարի Գրպծ. Արքաօր կը յանձնէր Ն. Ս.  
Յովհաննէս ԻԳ. Քահանայապետի կողմէ  
գրուած շնորհաւորական նամակ մը եւ  
նուէրներ, զորս Սրբ. Քահանայապետը  
հաճեր էր Ս. Ղազար ուղարկել, իր մը-  
տաւեւ մտերմութեան յիշատակները ար-  
ծարձելով:

1963ի Օգոստոս 24ին եւ 1964ի Յուլիս  
31ին, անակնկալ զոյգ այցելութիւններով  
- առաջինը՝ Ս. Զենոնի եւ Աղոլոյի մեր  
ամարանոցներուն, երկրորդը՝ Ս. Ղազար  
- հոգեպարար պահեր կը պարզէէր մե-  
զի՝ հայրական քաջալերանքի խօսքերով  
եւ աստուածաւանդ օրհնութեամբ: Վեր-  
ջին այս այցելութեան շրջանին, մասնա-  
ւոր շնորհաւորութիւններ կը ներկայա-  
ցնէր մեր վանքի նորընտիր Արքաօր, սի-  
րալիւր բարեմայթութիւններով. նոր ա-  
ւարտած էր վանական Ընդհ. Ժողովը:

Չենք ուզեր խորհուրդներ տեսնել. սա-  
կայն կը նշմարենք թէ շնորհարար այցե-  
լութիւններու թիւը կը հասնի իննի. ինը  
հատ են նաեւ իր ձեռնադրութիւնները  
մեր մօտ. երկու Եպիսկոպոս, եօթը կու-

սակրօն քահանայ, որոնցմէ վերջինը՝  
Հոռմի մէջ, իր Յիսնամեակի պատարագի  
ընթացքին (25 Դեկտ. 1967):

Բայց այցելութիւններէն աւելի, կամ  
անոնց համընթաց, այլ հոգեկան կապեր  
կը զօղեն մեզ սերտօրէն. Վսեմ. Ծիր. Ա-  
ղաճանեան, պատանի հասակէն, ջերմ  
յարգանք ու սէր կը տածէ Միւթար Ար-  
քաօր հանդէպ, որուն վարքին մէջ դը-  
տած է - ինչպէս ինք իսկ յայտարարած է  
շատ անգամ՝ իր ճառերով - տիպար օ-  
րինակը ազգանուէր եկեղեցականին, ո-  
րուն համար Կրօնքն ու Հայրենիքը՝ զոյգ  
թեւերն են աստուածապաշտութեան: Հե-  
տաքրքրուած է միշտ Միւթար Արքաօր  
երանացուցման դատի հարցերով, հետա-  
պնդած է անոր իրականացումը՝ իր Պա-  
տրիարքութեան օրերուն, եւ այժմ իբր  
«Հարցադիր» (Ponente) այդ դատին,  
հայրական քաջալերանքով կը հետեւի ա-  
նոր ընթացքին: Հայրական սիրով հրա-  
հրած է միշտ Միւթարեան Հայրերու ա-  
ռաքելանուէր ու զարոցական գործունէ-  
ութիւնը՝ մերձաւոր Արեւելքի մէջ, կամ  
այլուր. իր շնորհարար այցելութիւննե-  
րով, զնահատական արտայայտութիւն-  
ներով եւ այլ ամէն միջոցներով, քաջա-  
լերած է միշտ Միւթարեան Հայրերու  
վանական ու մշակութային աշխատանք-  
ներն ու ճիւղերը: 1945ին, Ծիրանաւորա-  
կան պատուի բարձրացումին առիթով,  
Միւթարեան Միաբանութիւնը պարծան-  
քով արձանագրած է Վսեմ. Ծիր. Գրիգոր  
Պետրոս Աղաճանեանի անունը՝ որպէս  
Պատուոյ Նախագահ Ս. Ղազարի Միւթ-  
թարեան ձեմարանին (Ակադեմիա):

Միւթարի զաւակները, ուրեմն, երախ-  
տագլխական վառ զգացումներով կը մի-  
անան գոհարանական սուրբ արարողու-  
թիւններուն, հայցելով Աստուծոյ բիւ-  
րապատիկ շնորհներ ու միւթարու-  
թիւններ, առողջութիւն եւ երկար կեանք  
մեր սիրելի Ծիրանաւոր Հոգեւոր Տիրոջ,  
վաստակելու «ընդ երկայն աւուրս» ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ Քրիս-  
տոսի կենսաւետ Աւետարանի տարածու-  
մին ի սիրիւս աշխարհի:



Վսեմ. Ծիր. Աղաճանեան, Ս. Մարկոսի տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի, որու ընթացքին Արքեպիսկոպոս կը ձեռնադրէ Գրգծ. Սրապիոն Ուլուխոնեան Արքեպիսկոպոսը (Վեներաբլի, 30 Հոկտ. 1960):

«Ես քեզի կը մաղթեմ՝ որ ոչ միայն Եպիսկոպոս, այլ նաեւ Պատրիարք ըլլաս...»:

Ս. Պիոս Ժ. Քահանայապետն էր, որ 1908ի Նոյեմբեր 1ին, հանդիսաւոր ունկընդրութեան մը պահուն, հայրական ու սրտաբուլիս այս մաղթանքը կ'ուղղէր հայազգի փոքրիկ ժառանգաւորի մը:

Ժպտաղէմ Ղազարոսն էր այդ 13ամեայ պատանին, որ երկու տարիէ ի վեր՝ թո-

ղած իր հայրենի Ախլցխան եւ սիրելի ծընոյնները՝ կ'աշակերտէր Հռոմի Ուրբանեան Վարժարանին:

Ուշիմ եւ աստուածասէր պատանին, 1917ին արդէն իսկ «Վարդապետ» (Doctor) էր իմաստասիրութեան, աստուածաբանութեան եւ իրաւաբանութեան. եւ նոյն տարուան Դեկտ. 23ին, քահանայական սուրբ օծութեամբ կը բարձրանար խորան:

Գերպ. Ֆր. Աղաճանեան իսկոյն կը նըւիրուէր առաքելական կեանքի: 1919ին, զինք կը դռնենք Թիֆլիս, ուր «Ալիշանեան» դպրոց մը կը հիմնէր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին կից, որուն ժողովրդապետութիւնն էր ստանձնած: Քաղաքական մեծ փոփոխութիւններու հետեանքով՝ 1921ին, նորընծայ առաքելաւոր կը վերադառնար Հռոմ, պաշտօնավարելու համար նախ իրր փոխ-մեծաւոր՝ Լեոնեան Հայ Ժառանգաւորաց Վարժարանին, եւ ապա իրր Մեծաւոր՝ 1932-37:

Այդ տարիներուն (1921-1937), Ուրբանեան համալսարանին մէջ կը դասաւանդէր, փրկիսօփայութեան եւ աստուածաբանութեան ամպլոններէն, կը հրատարակէր արժէքաւոր երկեր՝ Ս. Խորհուրդներու մասին (երկու հատոր՝ լատիններէն), Երանելի Տ. Կոմիտաս քահանայի վարքը (խոսկերէն):

Իր հարիւրաւոր աշակերտները, այսօր ցրուած աշխարհի չորս ծագերուն, բարձրացած եպիսկոպոսութեան աստիճանին կամ նոյնիսկ Ծիրանաւորական պատիւներու, յուզումով կը յիշեն իրենց ուսուցչին սրբաշնորհ դասաւանդութիւնները եւ սիրոյ ջերմ կապերով միացած են միշտ անոր հետ:

Իսկ իր ձեռնասուն հայազգի սաները՝ վկաներն են իր հայրախնամ դաստիարակութեան եւ հոգատար սիրոյն:

1928ին խորհրդական կ'անուանուէր Արեւելեան Ս. Ժողովի. 1934-35ի չրջանին՝ կը զբաղէր Զմամեան Միաբանութեան Կանոնադրի հարցերով:

1935ի Յուլիս 21ին, Գրգծ. Ֆր. Աղաճանեան Եպիսկոպոսական օծում կը ստանար՝ Կոմանայ Հայոց տիտղոսով:

1937ի Նոյեմբեր 30ին, կ'ընտրուէր Կաթողիկոս-Պատրիարք Կաթողիկէ Հայոց Տանն Կիլիկիոյ:

Ժիր աշխատանք ու արագ վերելք, համակ նուիրումով եւ անձնազոհ հոգիով:

Ուղիղ քսան տարի անցած էր իր քահանայական ձեռնադրութենէն. առաքելական եւ ուսուցչական վաստակներով արդիւնաշատ՝ ահա՛ կը բարձրանար կաթո-

ղիկոսական Գահը: Քառասուներկու տարեկան էր Ամենապատիւ Գերերջ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս:

Քսան եւ հինգ տարի պիտի տեւէր իր կաթողիկոսութիւնը (1937-1962), ազգանուէր ու եկեղեցաշէն զործունէութեամբ լի, վեհանձն ու քաջարի Հովուապետի շունչով օծուն:

Իր հրատարակած պատմական կոնդակները, խօսած քարոզները, կատարած բանաստեղծութիւնները, մեծ յիշատակներու եւ տարեդարձներու ողբկոչումները, այցելութիւնները՝ երկրէ երկիր եւ աշխարհամասէ աշխարհամաս, մանաւանդ Ծիրանաւորական աստիճանի ամբարձումէն ետք (1946), յատկապէս հանդիպումները քաղաքական մեծամեծ ղեկավարներու հետ, զինք կը դարձնեն միջազգային համբաւով եկեղեցական մը. շքանշաններ, դափնեպսակներ կը բարդուին հետզհետէ. սակայն Վսեմ. Ծիր. Աղաճանեան, պարզունակ ու հեղահամբոյր, իր Ազգին ու ժողովուրդին մտահոգութիւններով, անոր կրօնական վերելքի ու միասնականութեան հրատապ հարցերով կը տոչոտէր առաւելապէս, զեղեցիկ ծրագիրներ կ'իրագործէր՝ եկեղեցիներ կառուցանելով, դպրոցներ եւ որբանոցներ կանգնելով, կրթականոցներ շինելով:

Վսեմ. Ծիր. Աղաճանեան Կաթողիկոսի բազմամեայ շինարար զործունէութեան պատկերը շատ դժուարին է գծել իր ամբողջութեամբ: Քահանայութեան յիշնամեակի առիթով լոյս տեսած չքեղ հատորը, «Չայն Հովուական», հարազատ արձագանդն է իր սրտին թրթռացումներուն, խօսուն պատկերը՝ իր հաւատքին ու դործին. մեծ Հայրապետին հոգիին կայծն է, որ լուսաշող փարոս մըն է միանգամայն եւ առաջնորդ երկնահարաւէր՝ հաւատքի ակերուն դիմող հոգիներու:

Վսեմ. Ծիր. Աղաճանեանի համբաւն ու հմայքը շնորհալի՛ դրաւեցին ուշադրութիւնն ամբողջ աշխարհի, ու Նախախնամութիւնը ընդարձակեց անոր իշխանութեան սահմանները, հազարապատկեց անոր խնամքին յանձնուած փոքրիկ հօտը:



Վսեմ. Ծիր. Աղաճանեան կը բացախուէ՝ Մխիթար Արքայապետի բացման հանդէսին (Վեներտիկ, Ս. Ղազար, 12 Օգոստ. 1962):

Վսեմ. Ծիր. Աղաճանեանի սիրոյն եւ աշխատանքին ընդարձակութիւնը, արդարեւ, տիեզերածառալ հանդամանք ըստացաւ, երբ զլուխ անցաւ իր ներկայ պաշտօնին, նախ իրր զեր-Նախագահ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին (1958), եւ հոսկ՝ իրր Նախագահ (1960):

Կ'աճէր, աշուէս, հատիկն Աւետարանին, ու երբեմնի փոքրիկ Ղազարոսը կ'ընդարձակէր հիմա իր ոտները՝ հաստարմատ ու երկնաբերձ կաղնիի նման՝ զրկելու միլիոնաւոր ժողովուրդներ, ամէն ցեղէ ու դոյնէ, քրիստոնէական սուրբ հաւատքով՝ հովանի պարգեւելու անոնց:

Խորհուրդ խորին, անհա՛ս, անըսկի՛ղբն...:

Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի նըպատակն է քարոզել Ս. Աւետարանը եւ ամբայնել Քրիստոսի սուրբ հաւատքը՝

հեթանոս ու աշխարհ ժողովուրդներու մէջ, ուր չէ հասած տակաւին փրկութեան լոյսը, ժողովուրդներ՝ որոնք բարդաւաճելու ընթացքին մէջ են եւ քաղաքական անկախութիւն կը ստանան հետզհետէ: Ափրիկէ, Ծաղրադոյն Արեւելք, գլխաւոր կեդրոնները կը կաղմեն այս քարոզութեան, որ կ'ընդգրկէ Ալաւքայէն մինչեւ Ուկրաինա, Պոմպէյէն մինչեւ Հոնկ-Քոնկ: Հսկայածառալ աշխատանքի մը զեկափարն է, ուրեմն, այսօր, Վսեմ. Ծիր. Աղաճանեան:

Հոռոմայեցի ժողովուրդը կը սիրէ «կարմիր Քահանայապետ» անուանել զինք. մինչ «սպիտակը» է ինքն Պօղոս Զ. Սրբղ. Քահանայապետը:

Կարմիր՝ իր Ծիրանիին համար, Քահանայապետ՝ իրաւասական իր ընդարձակ իշխանութիւններուն համար:

Արդարեւ, Վսեմ. Ծիր. Աղաճանեանի իրաւասական սահմանները կը զբաւեն երկրագունտի հողամասերուն կէսը, աշխարհի բնակչութեան 51%ով. իր իրաւասութեան ներքեւ կ'աշխատին 122 արքեպիսկոպոսական եւ 528 եպիսկոպոսական թեմեր, 142 Առաջնորդական վիճակներ: Հազարաւոր կուսակրօն քարոզիչ քահանաներ ու մայրապետներ կը զործեն այդ առաքելութեանց մէջ, 62 միաբանութիւններու հետ միասին:

Քարոզիչներու թիւին մասին որոշ գաղափար մը կաղմելու համար, թող բաւէ նշել՝ թէ միայն 1967ի ընթացքին, 560 կուսակրօն քահանաներ ձեռնադրուած են՝ առաքելական այդ հողամասերուն համար:

Այս բոլորին համար, Վսեմ. Ծիր. Աղաճանեան իրր օժանդակ ունի բաղմաթիւ օղնական կաղմակերպութիւններ, յանձնաժողովներ, անմիջական խորհրդականներ, փորձառու մասնագէտներ, աշխարհական թէ եկեղեցական:

Մինչ հայ ժողովուրդը արդարօրէն պարծանք կը նկատէ՝ որ իր ցեղէն գաւաղ մը, այն երբեմնի փոքրիկ Ղազարոսը, հիմա զլուխ է կանդնած առաքելաջան այս հսկայ կաղմակերպութեան ինչպէս Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի ընթացքին՝ Գերագոյն Ատեանին մաս կը կաղմէր, իրրեւ Զորս Ղեկավարներէն մէկը՝ ինք Վսեմ. Ծիրանաւոր Գրիգոր-Պետրոս Աղաճանեան, վանակաւոր նման ամփոփ ու կանոնաւոր կեանք մը կ'անցընէ, եկեղեցիէն պաշտօնարան, զրաւեղանէն խորան փութալով ամէն օր, նոյն կանոնաւոր ընթացքով, համեստ ու խոնարհ հետապնդումով, զոհելով նոյնիսկ իր առողջութիւնը:

Գրիգորներու եւ Ներսէսներու հոգին է որ կը վերարծարծի իր մէջ, Աւետարանին սուրբ հուրով բոցակերպելու համար աղպեր ու երկիրներ: Պաշտօնի բերումով՝ աղպեր ու երկիրներ: Պաշտօնի բերումով՝ աղպեր ու երկիրներ: Պաշտօնի բերումով՝ աղպեր ու երկիրներ: Պաշտօնի բերումով՝ աղպեր ու երկիրներ: Պաշտօնի բերումով՝ աղպեր ու երկիրներ:



Վսեմ. Ծիր. Աղաճանեան կը կատարէ Մխիթար Արքայապետի բացումը (Վեներտիկ, Ս. Ղազար, 12 Օգոստ. 1962):

հայկականութեան քարոզութիւն մըն ալ կը կատարէ անխօս ու ժիր:

Թող ամբողջ հայ ժողովուրդը աղօթքով ու սրտով միանայ իր Մեծ Զաւակին, ինչպէս ինք՝ Մատակառարէն մինչեւ Թայլանտի կատարած ուղեւորութիւններու ընթացքին՝ միացած կ'ապրի միշտ հայ ժողովուրդին հետ, մերս Ս. Գրիգոր Լուսաւորչի անեղծ հաւատքին ցոլքերը տարածելով երկրէ երկիր:

Երախտալէտ իղձերով մեր մաղթանքներուն ամէնէն անկեղծն ու խանդավառը կ'ուղղենք մեր Ծիրանիփառ Հայրապետին, իր ոսկեղէն Յորեղանի արչալոյսին: Հունձքն առատ թող ըլլայ իր ժրջան քարոզութեան եւ աշխատանքին, իսկ մշակները՝ բաղմաթիւ ու ընտիր:

Հ. Ն. Տ. Ն.